COMMONSPIRIT HEALTH
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՆԱԳԻՐ Ֆինանսական աջակցություն

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝
1 հուլիսի 2022 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ՝ Finance G-003

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԿԶԲՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ՝

1 հուլիսի 2021 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ներքին եկամուտների մասին օրենսգրքի (IRC) 501(r) բաժնի՝ հարկազատված մնալու համար CommonSpirit Health հիվանդանոցի յուրաքանչյուր կազմակերպությունից պահանջվում է սահմանել Ֆինանսական աջակցության գրավոր քաղաքականություն (FAP) և Շտապ օգնության բժշկական խնամքի քաղաքականություն, որոնք կիրառվում են հիվանդանոցի հաստատության կողմից շտապ օգնության բժշկական խնամքի և բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքի բոլոր դեպքերում (այսուհետ՝ EMCare)։ Սույն քաղաքականության նպատակն է նկարագրել այն պայմանները, որոնց դեպքում հիվանդանոցային հաստատությունն իր հիվանդներին տրամադրում է ֆինանսական աջակցություն։ Բացի այդ, սույն քաղաքականությունը նկարագրում է այն գործողությունները, որոնք հիվանդանոցային հաստատությունը կարող է ձեռնարկել հիվանդի հաշվի չվճարման դեպքում։

---

[1] Ուղղակի մասնաճյուղը որևէ կորպորացիա է, որի միակ կորպորատիվ անդամը կամ միակ բաժնետերը CommonSpirit Health-ն է, ինչպես նաև Dignity Community Care-ը՝ Colorado-ի շահույթ չհետապնդող կորպորացիա։

[2] Դուստր ընկերությունը վերաբերում է որևէ կազմակերպության, լինի դա շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող, որում ուղղակի մասնաճյուղն ունի լիազորություն՝ նշանակելու այդպիսի կառավարման մարմնի քվեարկման իրավունք ունեցող անդամների հիսուն տոկոսը (50%) կամ ավելին, կամ այդպիսի կազմակերպությունում տնօրինում է քվեարկման իրավունք ունեցող անձանց հիսուն տոկոսը (50%) կամ ավելին (որը հաստատվում է անդամության լիազորություններով կամ արժեթղթեր, որոնք որոշումներ կայացնելու որոշակի լիազորություն են տալիս ուղղակի փոխկապակցված կազմակերպությանը) կամ որևէ կազմակերպություն, որում դուստր ընկերությունն ունի այդպիսի լիազորություն կամ քվեարկման իրավունք։

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health։ Միայն ներքին օգտագործման համար։

ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն քաղաքականությունը կիրառելի է CommonSpirit-ի և իր հարկազատված յուրաքանչյուր ուղղակի մասնաճյուղի [1] և հարկազատված դուստր ընկերությունների նկատմամբ, [2] որոնք աշխատեցնում են հիվանդանոցային հաստատությունը (առանձին որպես՝ CommonSpirit հիվանդանոցային կազմակերպություն, իսկ միասին՝ որպես CommonSpirit հիվանդանոցային կազմակերպություններ)։ CommonSpirit-ի քաղաքականությունն է առանց խտրականության տրամադրել EMCare CommonSpirit-ի հիվանդանոցային հաստատությունների բոլոր հիվանդներին՝ անկախ հիվանդի վճարելու ֆինանսական հնարավորությունից։

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Որպես բուժսպասարկման կաթոլիկ մատակարարներ և հարկազատված կազմակերպություններ՝ CommonSpirit հիվանդանոցային կազմակերպություններին կոչ է արվում բավարարել հիվանդների և այլոց կարիքները, ովքեր խնամք են փնտրում՝ անկախ մատուցվող ծառայությունների համար վճարելու իրենց ֆինանսական հնարավորություններից։

Հետևյալ սկզբունքները համահունչ են CommonSpirit-ի առաքելությանը, որպեսզի տրամադրեն կարեկցող, բարձրորակ, մատչելի բուժսպասարկման ծառայություններ և պաշտպանեն աղքատ և խոցելի անձանց շահերը։ CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունների ցանկությունն է, որ բուժսպասարկման ծառայությունների կարիք ունեցողների ֆինանսական հնարավորությունը չխանգարի նրանց փնտրել կամ ստանալ խնամք։

CommonSpirit հիվանդանոցային կազմակերպություններն առանց խտրականության պետք է CommonSpirit հիվանդանոցային հաստատություններում անհատներին տրամադրեն շտապ օգնության բժշկական խնամք՝ անկախ ֆինանսական աջակցության կամ պետական աջակցության իրենց իրավասությունից։

CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունները հանձնառու են ֆինանսական աջակցություն տրամադրել նրանց, ովքեր ունեն բուժսպասարկման կարիքներ և ապահովագրված չեն, թերի են ապահովագրված, իրավասու չեն պետական որևէ ծրագրի համար կամ այլապես ի վիճակի չեն վճարելու CommonSpirit հիվանդանոցային հաստատությունների կողմից տրամադրվող, բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ոչ շտապ խնամքը։

ԴԻՄՈՒՄ

A. Սույն Քաղաքականությունը կիրառելի է հետևյալ դեպքերում

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health։ Միայն ներքին օգտագործման համար։

- EMCare-ի համար տրամադրված CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության կողմից հիվանդանոցային հաստատությունում առաջացած բոլոր ծախսերի համար:
- CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության կողմից աշխատող բժշկի կամ առաջադեմ պրակտիկայի բժշկի կողմից տրամադրված EMCare-ի բոլոր ծախսերը, եթե այդպիսի խնամքը տրամադրվում է հիվանդանոցային հաստատությունում:
- Էականորեն կապակցված կառույցի կողմից աշխատող բժշկի կամ առաջադեմ պրակտիկայի բժշկի կողմից տրամադրված EMCare-ի բոլոր ծախսերը, որոնք առաջանում են հիվանդանոցային հաստատությունում:
- Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, սակայն հիվանդներին տրամադրվող չփոխհատուցվող խնամքը, որտեղ հիվանդը կկրի ծախսերի պատասխանատվությունը, օրինակ՝ մնալու ժամկետից շատ մնացած օրերի համար կամ այնպիսի հանգամանքներում, որտեղ հիվանդի նպաստները սպառվել են:
- Գումարների հավաքման և վերականգնման գործողությունները պետք է կատարվեն՝ համաձայն CommonSpirit-ի Կառավարման քաղաքականության Finance G-004-ի՝ *Հաշիվների ներկայացում և հավաքագրումներ*:

B. Համակարգումն այլ օրենքների հետ

Ֆինանսական աջակցության տրամադրումը կարող է ենթակա լինել լրացուցիչ օրենքների կամ կանոնակարգերի՝ ըստ դաշնային, նահանգային կամ տեղական օրենքների: Այդպիսի օրենքն իշխում է այնքանով, որքանով այն սահմանում է ավելի խիստ պահանջներ, քան այս Քաղաքականությունը: Եթե էականորեն ընդունված նահանգային կամ տեղական օրենքն ուղղակիորեն հակասում է սույն Քաղաքականությանը, CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությանը, CommonSpirit-ի իրավաբանական թիմի ներկայացուցչի, CommonSpirit-ի եկամուտների ստացման շրջափուլի ղեկավարության և CommonSpirit-ի հարկային հարցերով ղեկավարության հետ խորհրդակցելուց հետո, պետք է թույլատրվի սույն Քաղաքականության հավելված ընդունել՝ նախքան քաղաքականության վերանայման հաջորդ շրջափուլը, սույն Քաղաքականության այնպիսի նվազագույն փոփոխություններով, որոնք անհրաժեշտ են որևէ կիրառելի օրենքի հետ համապատասխանություն ձեռք բերելու համար:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սովորաբար հաշիվ ներկայացվող գումարը (AGB) նշանակում է գանձման ենթակա առավելագույն գումարը, որի վճարման համար անձնական պատասխանատվություն է կրում հիվանդը, որը սույն Ֆինանսական

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

աջակցության քաղաքականության համաձայն, ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք ունի, բոլոր նվազեցումները և զեղչերը (ներառյալ սույն քաղաքականության մեջ առկա զեղչերը) կիրառվելուց ու ապահովագրողների կողմից փոխհատուցված գումարները հանելուց հետո: Ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք ունեցող որևէ հիվանդից չի գանձվի ավելի շատ գումար, քան հիվանդին տրամադրված EMCare-ի AGB-ն: CommonSpirit-ը հաշվարկում է AGB-ն ըստ բուժհաստատության՝ օգտագործելով «նախորդ ժամանակահատվածների հաշվապահական հաշվետվությունների վերլուծության» մեթոդը, բազմապատկելով «համախառն ծախսերը» որևէ EMCare-ի համար, որ այն տրամադրում է՝ համաձայն AGB-ի տոկոսների, որոնք հիմնված են Medicare-ի և մասնավոր ապահովագրության շրջանակում պահանջվող նախորդ պահանջների վրա, ինչպես սահմանված է դաշնային օրենքում: Այս նպատակների համար «համախառն ծախսեր» նշանակում է յուրաքանչյուր հիվանդանոցային հաստատության հաշիվ ներկայացվող ծառայությունների ցանկում նշված գումարը յուրաքանչյուր EMCare-ի ծառայության համար:

Դիմումի ժամկետ նշանակում է CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության կողմից հիվանդներին ֆինանսական աջակցության դիմումը լրացնելու համար տրամադրվող ժամանակը: Այն սպառվում է (i) հիվանդի՝ հիվանդանոցային հաստատությունից դուրս գրվելուց 365 օր անց կամ EMCare-ի ամսաթվից ավելի ուշ կամ (ii) հիվանդանոցային հաստատությունում ստացված EMCare-ի դուրսգրումից հետո տրվող նախնական հաշվի ամսաթվից 240 օրից ավելի ուշ:

CommonSpirit կառույցի սպասարկման տարածք նշանակում է սույն Քաղաքականության նպատակների համար հիվանդանոցային հաստատության կողմից սպասարկվող համայնք, ինչպես նկարագրված է համայնքի առողջապահական կարիքների իր ամենավերջին գնահատման մեջ՝ ըստ IRC-ի 501(r)(3) բաժնի:

Համայնքի առողջապահական կարիքների գնահատումը (CHNA) անցկացվում է հիվանդանոցային հաստատության կողմից առնվազն երեք (3) տարին մեկ՝ համաձայն IRC-ի 501(r)(1)(A) բաժնի, հետո CommonSpirit-ի յուրաքանչյուր հիվանդանոցային կազմակերպություն ընդունում է ռազմավարություններ, որպեսզի բավարարի CHNA-ի միջոցով սահմանված համայնքի առողջապահական կարիքները:

Իրավասության սահմանման ժամանակահատված - Ֆինանսական աջակցության իրավասությունը սահմանելու նպատակներով հիվանդանոցային հաստատությունը կվենարայի տարեկան ընտանեկան եկամուտը նախորդ վեց ամսյա (6) ժամկետով կամ նախքան հարկային տարին, ինչպես ցուցադրվա

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

է վճարման վերջին անդորրագրերով կամ եկամտահարկի վերադարձման փաստաթղթերով և այլ տեղեկություններով: Շահույթի ապացույցը կարող է սահմանվել՝ տարեկան կտրվածքով հաշվարկելով ընտանիքի տարեկան եկամուտը՝ հաշվի առնելով ընթացիկ շահույթների գործակիցը:

Իրավասության որակավորման ժամանակահատված - Ֆինանսական աջակցության դիմումը և աջակցող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ իրավասու հաստատված հիվանդներին պետք է ֆինանսական աջակցություն տրամադրվի բոլոր իրավասու հաշիվների համար, որոնք ստացվել են որոշման օրվանից տասներկու (12) ամիս առաջ և հետևաբար որոշման ամսաթվից սկսած վեց (6) ամսվա ժամանակահատվածում: Եթե իրավասությունը հաստատվում է՝ ըստ ենթադրյալ իրավասության չափանիշների, ֆինանսական աջակցությունը նաև կկիրառվի բոլոր իրավասու հաշիվների նկատմամբ, որոնք առաջացել են որոշման ամսաթվից տասներկու (12) ամիս առաջ ստացված ծառայությունների համար:

Շտապ օգնության բժշկական խնամք, EMTALA - ցանկացած հիվանդ, որին հարկավոր է խնամք՝ ելնելով իր շտապ օգնության բժշկական վիճակից՝ համաձայն Սոցիալական ապահովության մասին օրենքի 1867-րդ բաժնի (ԱՄՆ օրենսգրքի 42-րդ գլուխ, բաժին 1395dd) հիվանդանոցային հաստատությունում պետք է վերաբերվի՝ առանց խտրականության և անկախ հիվանդի խնամքի վճարողունակության հնարավորությունից: Ավելին, ցանկացած գործողություն, որը հիասթափեցնում է հիվանդներին փնտրել EMCare, այդ թվում, սակայն չսահմանափակվելով, պահանջել վճարում բուժումից առաջ կամ թույլատրել պարտքերի հավաքման և վերականգնման գործողություններ, որոնք միջամտում են EMCare-ի տրամադրումը, արգելվում է: Հիվանդանոցային հաստատությունները նույնպես պետք է գործեն դաշնային և նահանգային բոլոր պահանջներին համապատասխան, որոնք վերաբերում են շտապ բժշկական պայմանների խնամքի տրամադրմանը, ներառյալ զննման, բուժման և տեղափոխման պահանջները՝ համաձայն Շտապօգնության բուժման և աշխատանքի մասին դաշնային օրենքի (EMTALA) և 42 CFR (Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք) 482.55-ի (կամ որևէ իրավահաջորդող կանոնակարգի): Հիվանդանոցային հաստատությունները պետք է խորհրդակցեն և առաջնորդվեն CommonSpirit EMTALA-ի ցանկացած քաղաքականությամբ, EMTALA-ի կանոնակարգերով և Medicare/Medicaid-ի մասնակցության կիրառելի պայմաններով՝ որոշելով, թե որն է հանդիսանում շտապօգնության վիճակ և յուրաքանչյուրի պարագայում որ գործընթացներին է պետք հետևել:

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

Հավաքագրման արտակարգ գործողություններ (ECA-ներ) - Հիվանդանոցային հաստատությունը չի ներգրավվի որևէ անհատի դեմ կիրառվող ECA-ներում՝ նախքան սույն Քաղաքականության ներքո իրավասությունը որոշելու համար ողջամիտ ջանքեր գործադրելը: ECA-ն կարող է ներառել խնամքի հաշիվ կամ վճարում ձեռք բերելուն ուղղված հետևյալ գործողություններից որևէ մեկը.

- Անհատի պարտքի վաճառքը մեկ այլ կողմին, բացառությամբ դաշնային օրենսդրությամբ սահմանված դեպքերի, և
- Անհատի մասին բացասական տեղեկության տրամադրում սպառողական վարկերի գրասենյակներին:

ECA-ները չեն ներառում արգելանք, որը հիվանդանոցային հաստատությունն իրավունք ունի հաստատել նահանգի օրենսդրության համաձայն՝ անհատին (կամ նրա ներկայացուցչին) պարտք հանդիսացող որևէ վճռի կամ փոխզիջման հասույթների մասով՝ որպես անձնական վնասվածքների արդյունք, որի համար բուժհաստատությունը խնամք էր տրամադրել:

Ընտանիք նշանակում է (օգտագործելով Մարդահամարի գրասենյակի սահմանումը) երկու կամ ավելի անձանցից բաղկացած խումբ, ովքեր ապրում են միասին և ազգական են ծնունդով, ամուսնությամբ կամ որդեգրմամբ: Համաձայն Ներքին եկամուտների ծառայության (IRS) կանոնների, եթե հիվանդն իր եկամտահարկի հայտարարագրով ինչ-որ մեկին նշում է որպես իր խնամառու, այդ անձը կարող է համարվել խնամառու Ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով: Եթե IRS-ի հարկային թղթաբանությունը հասանելի չէ, այդ դեպքում ընտանիքի չափսը կորոշվի այն խնամառուների թվով, որը փաստաթղթավորված է ֆինանսական աջակցության դիմումում և ստուգվել է հիվանդանոցային հաստատության կողմից:

Ընտանեկան եկամուտը դիմողի և դիմողի ընտանիքի բոլոր անդամների համար որոշվում է՝ համաձայն ձևափոխված և ճշգրտված համախառն եկամտի IRS-ի սահմանման: Իրավասությունը սահմանելիս CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունը կարող է հաշվի առնել հիվանդի ընտանիքի «դրամական միջոցները»: Այնուամենայնիվ, այս որոշման նպատակների համար դրամական միջոցները չեն ներառի կենսաթոշակի կամ հետաձգված փոխհատուցման պլանները:

Աղքատության մակարդակի դաշնային ուղեցույցները (FPL) Միացյալ Նահանգների առողջապահության և սոցիալական ծառայությունների վարչության կողմից տարեկան կտրվածքով թարմացվում են դաշնային գրանցամատյանում՝ համաձայն Միացյալ Նահանգների օրենսգրքի վերնագիր 42-ի 9902-րդ բաժնի

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

(2) ենթաբաժնի: Ընթացիկ ուեցույցներից կարելի է օգտվել այստեղ՝ http://aspe.hhs.gov/poverty-guidelines:

Ֆինանսական աջակցություն նշանակում է աջակցության տրամադրում ան հիվանդներին, որոնց համար ֆինանսական դժվարություն կլինի ամբողջությամբ վճարել հիվանդանոցային հաստատությունում տրամադրված EMCare-ի սպասվելիք ծախսերը և ովքեր համապատասխանում են այդպիսի աջակցության իրավասության չափանիշներին: Ապահովագրված հիվանդներին տրամադրվում է ֆինանսական աջակցություն այն չափով, որը թույլատրվում է հիվանդի ապահովագրական ընկերության պայմանագրով:

Երաշխավոր նշանակում է անհատ, ով իրավականորեն պատասխանատու է հիվանդի հաշիվը վճարելու համար:

Հիվանդանոցային հաստատություն (կամ բուժհաստատություն) նշանակում է առողջապահական բուժհաստատություն, որը պետության կողմից պահանջվում է, որ լիցենզավորված, գրանցված կամ ճանաչված լինի որպես հիվանդանոց և որը գործարկվում է CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության կողմից:

Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամք նշանակում է ցանկացած բուժգործողություն, որը ողջամտորեն որոշվել է (մատակարարի կողմից), որ անհրաժեշտ է կանխարգելելու, ախտորոշելու, ուղղելու, բուժելու, մեղմելու կամ կանխելու ցանկացած վիճակի, հիվանդության, վնասվածքի կամ հիվանդացության վատթարացումը, որը վտանգում է կյանքը, տառապանք կամ ցավ է պատճառում, հանգեցնում հիվանդության կամ թուլության, սպառնում է առաջացնել կամ խորացնել որևէ տեսակի հաշմանդամություն, առաջացնել ֆիզիկական արատ կամ թերություն, կամ բարելավել մարմնի վատ գործող մասի գործունեությունը, եթե չկա բուժման այլ նույնքան արդյունավետ, ավելի պահպանողական կամ ավելի քիչ ծախսատար միջոց: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքը չի ներառում ընտրովի կամ կոսմետիկ բուժգործողություններ, որոնք ուղղված են բարելավելու միայն նորմալ կամ նորմալ գործող մարմնի մասի էսթետիկ տեսքը:

Աշխատեցնում է հիվանդանոցային հաստատություն - Համարվում է, որ հիվանդանոցային հաստատությունը գործում է կա՛մ իր սեփական աշխատողների միջոցով, կա՛մ մեկ այլ կազմակերպություն է պայմանագրային հիմունքներով աշխատեցնում բուժհաստատությանը: Հիվանդանոցային հաստատությունը կարող է նաև շահագործվել CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության կողմից, եթե CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունը կապիտալի կամ շահույթի տոկոսներ ունի այն կազմակերպությունում, որը հարկվում է որպես

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

գործակցություն, որն ուղղակիորեն շահագործում է նահանգային լիցենզավորված հիվանդանոցային հաստատությունը կամ անուղղակիորեն շահագործում է նահանգային լիցենզավորված հիվանդանոցային հաստատությունը՝ որպես գործակցություն հարկվող մեկ այլ կառույցի միջոցով:

Ենթադրյալ ֆինանսական աջակցություն նշանակում է ֆինանսական աջակցության իրավասության որոշումը, որը կարող է ապավինել երրորդ կողմի մատակարարների տրամադրած և այլ հանրամատչելի տեղեկատվությանը: Որոշումը, որ հիվանդը ենթադրաբար իրավասու է ֆինանսական աջակցության համար, կհանգեցնի անվճար կամ զեղչված EMCare- ի այն ժամանակահատվածին, որի ընթացքում անհատը ենթադրաբար իրավասու է:

Էականորեն կապակցված կառույց նշանակում է, CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության մասով կառույց, որը դիտվում է որպես գործակցություն դաշնային հարկային նպատակներով, որտեղ հիվանդանոցային կազմակերպությունն ունի կապիտալ կամ շահույթի տոկոսներ, կամ անտեսված կառույց, որի միակ անդամը կամ սեփականատերը հիվանդանոցային կազմակերպությունն է: Տրամադրում է EMCare նահանգային լիցենզավորված հիվանդանոցային հաստատությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման խնամքի տրամադրումը հիվանդանոցային կազմակերպության հետ չառնչվող առևտուր կամ բիզնես է, ինչպես նկարագրված է IRC-ի 513-րդ բաժնում:

Չապահովագրված նշանակում է անհատ, որը չունի երրորդ կողմի ապահովագրություն առևտրային երրորդ կողմի ապահովագրողի, ERISA պլանի, առողջապահական խնամքի դաշնային ծրագրի (այդ թվում՝ առանց սահմանափակման Medicare-ի, Medicaid-ի, SCHIP-ի և TRICARE-ի), աշխատողի փոխհատուցման կամ այլ երրորդ կողմի աջակցության կողմից՝ օգնելու համապատասխանել իր վճարման պարտականություններին:

Թերի ապահովագրված նշանակում է մասնավոր կամ պետական ապահովագրական ծածկույթ ունեցող անհատ, ում համար ֆինանսական դժվարություն կլինի ամբողջությամբ վճարել սույն Քաղաքականությամբ փոխհատուցվող EMCare-ի ակնկալվող անձնական ծախսերը:

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

A. EMCare-ի համար հասանելի ֆինանսական աջակցություն

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

Հիվանդը, ով համապատասխանում է ֆինանսական աջակցության համար, կստանա անվճար կամ զեղչված EMCare, և որպես այդպիսին, երբեք պատասխանատվություն չի կրի AGB-ից ավել նախատեսված EMCare-ի համար: Ֆինանսական աջակցությունը պետք է տրամադրվի այն հիվանդներին, ովքեր համապատասխանում են այս փաստաթղթում նկարագրված իրավասության պահանջներին և բնակություն են հաստատել CommonSpirit կառույցի սպասարկման տարածքում, ինչպես սահմանված է հիվանդանոցային հաստատության ամենավերջին CHNA-ի կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այցը հրատապ է կամ շտապ կամ տեղի է ունենում California-ի հիվանդանոցային հաստատությունում: Ամերիկայի Միացյալ Նահանգներից դուրս գտնվող երկրների բնակիչները իրավասու չեն ֆինանսական աջակցության համար՝ առանց հիվանդանոցային հաստատության գլխավոր ֆինանսական տնօրենի (կամ նրա նշանակված անձի) նախնական հաստատման, բացառությամբ այն դեպքերի, երբ այցը հրատապ է կամ շտապ: Բոլոր պլանավորված ծառայությունները, այն հիվանդների համար, ովքեր CommonSpirit կառույցի սպասարկման տարածքից դուրս են բնակվում, պահանջում են նախնական հաստատում հիվանդանոցային հաստատության գլխավոր ֆինանսական տնօրենի (կամ նրա նշանակված անձի) կողմից: Եթե պատվիրատու մատակարարը ծառայություններ է հայցել հիվանդանոցային հաստատությունում, և նույն ծառայությունը տրամադրվում է նաև մեկ այլ բուժհաստատությունում, որն ավելի մոտ է հիվանդի բնակության վայրին և CommonSpirit կառույցի սպասարկման տարածքից դուրս է գտնվում, հիվանդանոցային հաստատությունը կարող է պատվիրատու մատակարարից պահանջել վերագնահատել ծառայությունները և խնդրել, որպեսզի ծառայություններն իրականացվեն հիվանդի բնակության վայրին ավելի մոտ բուժհաստատությունում:

B. EMCare-ից բացի այլ ֆինանսական աջակցություն հասանելի չէ

EMCare-ից բացի այլ խնամքի համար ֆինանսական աջակցություն հասանելի չէ: EMCare-ից բացի այլ խնամքի դեպքում ոչ մի հիվանդ պատասխանատու չի լինի նման խնամքի համար նախատեսված զուտ ծախսերի համար (այդպիսի խնամքի համար համախառն ծախսեր՝ բոլոր պահումները և ապահովագրական փոխհատուցումները կիրառելուց հետո):

C. Ֆինանսական աջակցության հասանելի գումար

Ֆինանսական աջակցության իրավասությունը կքննարկվի այն անհատների համար, ովքեր ապահովագրված չեն, թերի են ապահովագրված, իրավասու չեն պետական առողջապահական նպաստների ծրագրին և ի վիճակի չեն վճարել իրենց խնամքի համար՝ սույն Քաղաքականության ֆինանսական կարիքների

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

որոշման հիման վրա: Ֆինանսական աջակցության տրամադրումը պետք է հիմնված լինի ֆինանսական կարիքների անհատական որոշման վրա և չպետք է հաշվի առնի որևէ հնարավոր խտրական գործոն, ինչպիսիք են՝տարիքը, ծագումը, սեռը, գենդերային ինքնությունը, սեռային դրսևորումը, ռասան, գույնը, ազգային ծագումը, սեռական կողմնորոշումը, ամուսնական կարգավիճակը, սոցիալական կամ ներգաղթի կարգավիճակը, կրոնական պատկանելությունը կամ դաշնային, նահանգային կամ տեղական օրենսդրությամբ արգելված որևէ այլ հիմք:

Բացառությամբ ենթադրյալ ֆինանսական աջակցության իրավասության դեպքերի, հետևյալ իրավասության չափանիշները պետք է բավարարվեն, որպեսզի հիվանդը որակավորվի ֆինանսական աջակցության համար.

- Հիվանդը պետք է հաշվեհամարին ունենա նվազագույնը տասը դոլարի (10,00 ԱՄՆ դոլար) մնացորդ CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության մոտ: Բազմաթիվ հաշիվների մնացորդները կարող են համակցվել այս գումարի չափն ապահովելու համար: Տաս դոլարից (10,00 ԱՄՆ դոլար) քիչ մնացորդ ունեցող հիվանդները/երաշխավորները կարող են կապվել ֆինանսական խորհրդատուի հետ՝ ամսական մաս-մաս վճարումները կատարելու նպատակով:
- Հիվանդը պետք է համապատասխանի Հիվանդների համագործակցության համար նախատեսված ստանդարտներին, ինչպես նկարագրված է այստեղ:
- Հիվանդը պետք է ներկայացնի ֆինանսական աջակցության լրացված դիմում (FAA):

D. Բարեգործական խնամք

- <u>FPL-ի մինչև 200%</u> – Յուրաքանչյուր հիվանդ, ում ընտանեկան եկամուտը հավասար է FPL-ի 200%-ին կամ դրանից ցածր է, այդ թվում՝ առանց սահմանափակման, ցանկացած չապահովագրված կամ թերի ապահովագրված հիվանդ, իրավունք ունի ֆինանսական աջակցություն ստանալ իրավասու ծառայությունների համար իր հաշվի մնացորդի մինչև 100%-ի չափով զեղչ, որը հիվանդին է տրամադրվում վճարումից հետո, եթե առկա է երրորդ կողմ(եր)ի միջոցով:

- <u>FPL-ի 201% - 400%</u> – Յուրաքանչյուր հիվանդ, ում ընտանեկան եկամուտը հավասար է FPL-ի 201%-ին կամ դրանից բարձր է, սակայն ավելի ցածր է FPL-ի 400%-ից, այդ թվում՝ առանց սահմանափակման, ցանկացած չապահովագրված կամ թերի ապահովագրված հիվանդ, իրավունք ունի ֆինանսական աջակցություն ստանալ՝ նվազեցնելով իրավասու ծառայությունների համար իր հաշվի մնացորդը, որը հիվանդին է տրամադրվում վճարումից հետո, եթե առկա է երրորդ կողմ(եր)ի

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

միջոցով, այն գումարով, որը չի գերազանցում հիվանդանոցային հաստատության AGB-ն:

E. Հիվանդների համագործակցության համար նախատեսված ստանդարտներ

Հիվանդը պետք է համագործակցի հիվանդանոցային հաստատության հետ՝ տրամադրելով իրավասությունը որոշելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը: Նման համագործակցությունը ներառում է ցանկացած պահանջվող դիմումի կամ ձևաթղթի լրացում: Հիվանդը պատասխանատու է հիվանդանոցային հաստատությանը ֆինանսական իրավիճակի ցանկացած փոփոխության մասին ծանուցելու համար, որը կազդի իրավասության գնահատման վրա:

Հաստատվելուց առաջ հիվանդը պետք է սպառի վճարման բոլոր այլ տարբերակները, այդ թվում մասնավոր ապահովագրական ծածկույթը, դաշնային, նահանգային և տեղական բժշկական աջակցության ծրագրերը և երրորդ անձանց կողմից տրամադրվող աջակցության այլ ձևերը: Ֆինանսական աջակցության համար դիմողը պատասխանատու է հասանելի ապահովագրական ծածկույթի հանրային ծրագրերին դիմելու համար: Նաև ակնկալվում է, որ հիվանդանոցային հաստատության շրջանակներում նա կկիրառի պետական կամ մասնավոր առողջության ապահովագրության վճարման տարբերակները CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության կողմից տրամադրվող խնամքի համար:

Պետք է պահանջվի հիվանդի և, անհրաժեշտության դեպքում, ցանկացած երաշխավորի համագործակցությունը՝ կիրառելի ծրագրերին և ֆինանսավորման ճանաչելի աղբյուրներին դիմելու համար: Հիվանդանոցային հաստատությունը պետք է հաստատակամ ջանքեր գործադրի՝ օգնելու հիվանդին կամ հիվանդի երաշխավորին պետական և մասնավոր ծրագրի դիմելու համար, որը կարող է ներառել COBRA-ի միջոցով ձեռք բերված ապահովագրություն՝ առողջության ապահովագրության փոխանակման, առողջության առևտրային ապահովագրության կամ առողջապահական պլանի ծածկույթի ներքո: Եթե հիվանդանոցային հաստատությունը որոշի, որ ապահովագրությունը հնարավոր է ապահովագրության փոխանակման, առողջության առևտրային ապահովագրության ներքո կամ COBRA ծրագիրը հավանականորեն հասանելի է, և որ հիվանդը Medicare-ի կամ Medicaid-ի շահառու չէ, ապա հիվանդանոցային հաստատությունը կարող է պահանջել, որ հիվանդը կամ երաշխավորը (i) հիվանդանոցային հաստատությանը և կիրառելի հիմնադրամին տրամադրի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է այդպիսի հիվանդի համար ամսական հավելավճարը որոշելու համար, և (ii) համագործակցի հիվանդանոցային հաստատության և հիմնադրամի անձնակազմի հետ՝ որոշելու, թե արդյոք նա իրավասու է ապահովագրության

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

օգնության համար, որը կարող է առաջարկվել (նշանակված հիմնադրամի ֆինանսական միջոցներով) սահմանափակ ժամանակով՝ վերը նշված ապահովագրական ծածկույթն ապահովելու նպատակով:

F. Չապահովագրված հիվանդի զեղչ

Ապահովագրական փաթեթով չապահովագրված ծառայությունները և այն հիվանդները/երաշխավորները, ովքեր ապացույցներ են տրամադրում առ այն, որ առկա չէ առողջության ապահովագրության որևէ ծածկույթ թե՛ գործատուի կողմից տրամադրվող ծրագրի, թե՛ պետական ծրագրի միջոցով, ինչպիսիք են՝ Medicare-ը, Medicaid-ը կամ այլ նահանգային և տեղական ծրագիր՝ վճարելու հիվանդին մատուցվող, բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բուժսպասարկման ծառայությունների համար, իրավասու են օգտվել չապահովագրված հիվանդների համար նախատեսված զեղչից: Այս զեղչը չի տարածվում կոսմետիկ բնույթի կամ բժշկական տեսանկյունից ոչ անհրաժեշտ բուժգործողությունների վրա և հասանելի կլինի միայն իրավասու ծառայությունների համար:

Յուրաքանչյուր հիվանդանոցային հաստատություն պետք է հաշվարկի և սահմանի զեղչը՝ ելնելով իրավասու հիվանդների համար հասանելի համախառն ծախսերից: Վերը նկարագրված ֆինանսական աջակցությունը փոխարինում է չապահովագրված հիվանդների համար նախատեսված այս զեղչը: Եթե որոշվի, որ ֆինանսական աջակցության դիմումը հետագայում կնվազեցնի հիվանդի հաշիվը, ապա հիվանդանոցային հաստատությունը կչեղարկի չապահովագրված հիվանդի համար նախատեսված զեղչը և կիրառելի ճշգրտումներ կկատարի՝ Ֆինանսական աջակցության քաղաքականության համաձայն:

G. Ինքնուրույն վճարելու զեղչ

Այն չապահովագրված հիվանդների համար, ովքեր չեն համապատասխանում սույն Քաղաքականությունում նշված ֆինանսական աջակցության որևէ զեղչի, հիվանդանոցային հաստատությունները կարող են ավտոմատ (ինքնուրույն վճարվող) զեղչ կիրառել հիվանդի հաշվի նկատմամբ՝ համաձայն CommonSpirit-ի եկամուտների ստացման շրջափուլի մասին ուղեցույցների և ընթացակարգերի: Ինքնուրույն վճարման այս զեղչը չի փորձարկվել ըստ կարիքների:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ՄԵԹՈԴԸ

Բոլոր հիվանդները պետք է լրացնեն CommonSpirit-ի FAA-ն, որպեսզի դիտարկվեն ֆինանսական աջակցության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք իրավասու են ենթադրյալ ֆինանսական աջակցության համար: FAA-

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

օգտագործվում է հիվանդանոցային հաստատության կողմից ֆինանսական կարիքների անհատական գնահատման նպատակով:

Աջակցությանը համապատասխանելու համար հիվանդը պետք է տրամադրի բանկային կամ ընթացիկ հաշվի քաղվածքներ, որոնք վկայում են հիվանդի հասանելի ռեսուրսների մասին (որոնք փոխարկվում են կանխիկի և հարկավոր չեն հիվանդի ամենօրյա ապրուստի համար) և առնվազն մեկ (1) աջակցող փաստաթուղթ, որը հաստատում է, որ ընտանեկան եկամուտն անհրաժեշտ է ներկայացնել FAA-ի հետ միասին: Աջակցող փաստաթղթերը կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով.

- Անհատի կողմից ներկայացված եկամտահարկի դաշնային հայտարարագրի ամենավերջին պատճենը,
- Ընթացիկ W-2 ձևաթուղթը,
- Ընթացիկ վճարման կտրոնները կամ
- Աջակցության ստորագրված նամակ:

Հիվանդանոցային հաստատությունն իր հայեցողությամբ կարող է հիմնվել իրավասության ապացույցների վրա, բացի FAA-ում կամ այս փաստաթղթում նկարագրվածից: Այլ ապացույցների աղբյուրները կարող են ներառել.

- Արտաքին հանրամատչելի տվյալների աղբյուրներ, որոնք տեղեկատվություն են տրամադրում հիվանդի/երաշխավորի վճարողունակության վերաբերյալ,
- Նախկինում մատուցած ծառայությունների համար հիվանդի չմարված հաշիվների և հիվանդի/երաշխավորի վճարումների պատմության վերանայում,
- Հիվանդի կամ երաշխավորի կողմից սույն Քաղաքականության ներքո աջակցության իրավասության վերաբերյալ նախնական որոշումներ, եթե այդպիսիք կան, կամ
- Պետական և մասնավոր վճարային ծրագրերից վճարման համապատասխան այլընտրանքային աղբյուրների և ապահովագրական ծածկույթի ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված ապացույցներ:

Այն դեպքում, երբ լրացված FAA-ում եկամուտ նշված չէ, գրավոր փաստաթուղթ է պահանջվում, որը նկարագրում է, թե ինչու եկամուտների մասին տեղեկատվությունը հասանելի չէ, և ինչպես է հիվանդը կամ երաշխավորն ապահովում կենսական հիմնական ծախսերը (օրինակ՝ բնակարան, սնունդ և կոմունալ ծառայություններ): Ֆինանսական աջակցության դիմողները, ովքեր մասնակցում են Առողջապահական ծառայությունների ազգային կորպուսի (NHSC) վարկերի մարման ծրագրին, ազատվում են ծախսերի մասին տեղեկատվություն ներկայացնելուց:

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

ԵՆԹԱԴՐՅԱԼ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունները գիտակցում են, որ ոչ բոլոր հիվանդներն ու երաշխավորներն են ի վիճակի լրացնել FAA-ն կամ տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը: Ֆինանսական խորհրդատուներն առկա են յուրաքանչյուր հիվանդանոցային հաստատությունում՝ օգնելու դիմումի լրացման կարիք ունեցող ցանկացած անհատի: Հիվանդների և երաշխավորների համար, ովքեր ի վիճակի չեն տրամադրել պահանջվող փաստաթղթերը, հիվանդանոցային հաստատությունը կարող է ենթադրյալ ֆինանսական աջակցություն տրամադրել՝ այլ ռեսուրսներից ստացված տեղեկատվության հիման վրա: Մասնավորապես, ենթադրյալ իրավասությունը կարող է որոշվել անհատի կյանքի հանգամանքների հիման վրա, որոնք կարող են ներառել.

- Նահանգային ֆինանսավորմամբ դեղատոմսով դուրս գրվող ծրագրերի ստացող,
- Անօթևան կամ անձ, ով խնամք է ստացել անօթևանների կամ անվճար խնամքի համար նախատեսված կլինիկայից,
- Մասնակցություն կանանց, նորածինների և երեխաների համար նախատեսված ծրագրերին (WIC),
- Սննդի օգնության իրավասություն,
- Այլ նահանգային կամ տեղական աջակցության ծրագրերի իրավասություն կամ ուղղորդումներ (օրինակ՝ Medicaid),
- Ցածր եկամուտով/սուբսիդավորվող բնակարանը որպես վավերահասցե էտրամադրվում, կամ
- Հիվանդը մահացել է՝ չունենալով որևէ հայտնի ամուսին/կին կամ հայտնի գույք:

Այս տեղեկատվությունը հնարավորություն կտա հիվանդանոցային հաստատություններին տեղեկացված որոշումներ կայացնել հիվանդների ֆինանսական կարիքների վերաբերյալ՝ տեղեկատվության բացակայության դեպքում օգտագործելով հիվանդի կողմից ուղղակիորեն տրամադրված առկա լավագույն գնահատականները: Ենթադրյալ ֆինանսական աջակցության համար իրավասու համարվող հիվանդը կստանա անվճար կամ զեղչված EMCare այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անհատը ենթադրաբար իրավասու է:

Medicaid-ի հիվանդները, ովքեր ստանում են չապահովագրված, բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ, կդիտարկվեն ենթադրյալ ֆինանսական աջակցության համար: Ֆինանսական աջակցությունը կարող է հաստատվել մինչև Medicaid-ի ուժի մեջ մտնելը:

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

Եթե որոշվում է, որ անհատը ենթադրաբար իրավասու է, ապա հիվանդին տասներկու (12) ամիս ժամկետով ֆինանսական աջակցություն կտրամադրվի, որն ավարտվում է ենթադրյալ իրավասության որոշման ամսաթվով: Արդյունքում, ֆինանսական աջակցությունը կկիրառվի բոլոր իրավասու հաշիվների վրա, որոնք առաջացել են որոշման ամսաթվից տասներկու (12) ամիս առաջ ստացված ծառայությունների համար: Ենթադրաբար իրավասու անհատը չի ստանա EMCare-ի ֆինանսական աջակցություն, որը տրվել է որոշման ամսաթվից հետո՝ առանց FAA-ն ավարտելու կամ ենթադրյալ իրավասության նոր որոշման:

Հիվանդների կամ նրանց երաշխավորների համար, ովքեր չեն արձագանքում հիվանդանոցային հաստատության դիմումի գործընթացին, տեղեկատվության այլ աղբյուրներ կարող են օգտագործվել ֆինանսական կարիքի անհատական գնահատում կատարելու համար: Այս տեղեկատվությունը հնարավորություն կտա հիվանդանոցային հաստատությանը տեղեկացված որոշում կայացնել չարձագանքող հիվանդների ֆինանսական կարիքի վերաբերյալ՝ տեղեկատվության բացակայության դեպքում օգտագործելով հիվանդի կողմից ուղղակիորեն տրամադրված առկա լավագույն գնահատականները:

Ֆինանսապես կարիքավոր հիվանդներին օգնելու նպատակով հիվանդանոցային հաստատությունը կարող է օգտագործել երրորդ կողմ՝ վերանայելու հիվանդի կամ հիվանդի երաշխավորի տեղեկատվությունը ֆինանսական կարիքները գնահատելու համար: Այս վերանայումն օգտագործում է առողջապահության ոլորտի կողմից ճանաչված, կանխատեսելի մոդել՝ հիմնված հանրային գրառումների տվյալների բազաների վրա: Մոդելը ներառում է հանրային գրառումների տվյալներ՝ սոցիալ-տնտեսական և ֆինանսական հնարավորությունների գնահատականը հաշվարկելու նպատակով: Մոդելի կանոնների հավաքածուն նախատեսված է յուրաքանչյուր հիվանդի գնահատման համար՝ հիմնվելով նույն չափանիշների վրա և հիվանդանոցային հաստատության կողմից չափորոշված է ֆինանսական աջակցության պատմական հաստատումների համաձայն: Սա հիվանդանոցային հաստատությանը հնարավորություն է տալիս գնահատելու, թե արդյոք հիվանդը բնորոշ է այլ հիվանդներին, ովքեր պատմականորեն որակավորում են ստացել ֆինանսական աջակցության համար՝ ավանդական դիմումի գործընթացի համաձայն:

Երբ մոդելը կիրառվի, այն կգործածվի մինչև անհույս պարտքերի զիջումը, երբ բոլոր այլ իրավասությունները և վճարման աղբյուրները սպառվեն: Սա թույլ է տալիս հիվանդանոցային հաստատությանը ստուգել ֆինանսական աջակցության բոլոր հիվանդներին՝ նախքան որևէ ECA-ների կիրառումը: Սույն Քաղաքականության համաձայն՝ այս վերանայման արդյունքում վերադարձված տվյալները կկազմեն ֆինանսական կարիքների համարժեք փաստաթուղթ:

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

Եթե հիվանդը չի համապատասխանում ենթադրյալ իրավասության պահանջներին, հիվանդը դեռևս կարող է անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել և դիտարկվել FAA-ի ավանդական գործընթացի շրջանակում:

Ենթադրյալ իրավասության կարգավիճակ շնորհված հիվանդների հաշիվներին կտրամադրվի անվճար կամ զեղչված խնամք իրավասու ծառայությունների համար՝ միայն ծառայության հետադարձ ամսաթվերով։Այս որոշումը չի կազմի անվճար կամ զեղչված խնամք, որը հասանելի է ավանդական դիմումի գործընթացի միջոցով: Այս հաշիվներն իրավասու կհամարվեն ֆինանսական աջակցության համար՝ համաձայն սույն Քաղաքականության: Դրանք չեն ուղարկվի հավաքագրման, ենթակա չեն լինի հավաքագրման հետագա գործողությունների և չեն ընդգրկվի հիվանդանոցային հաստատության անհույս պարտքերի ծախսի մեջ: Հիվանդները չեն ծանուցվի այս որոշման մասին նրանց տեղեկացնելու համար: Բացի այդ, ցանկացած նվազեցվող և համատեղ ապահովագրության գումար, որը հայտարարվում է որպես Medicare-ի անհույս պարտք, պետք է բացառվի բարեգործական խնամքի մասին հաշվետվությունից:

Ենթադրյալ սքրինինգն օգուտ է ապահովում համայնքին՝ թույլ տալով CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությանը կանոնավոր կերպով բացահայտել ֆինանսապես կարիքավոր հիվանդներին, նվազեցնել վարչական բեռը և ֆինանսական աջակցություն տրամադրել հիվանդներին և նրանց երաշխավորներին, որոնցից ոմանք կարող են արձագանքած չլինել FAA-ի գործընթացին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունների կողմից ֆինանսական աջակցության առկայության մասին ծանուցումը պետք է տարածվի տարբեր միջոցներով, որոնք կարող են ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով.

- Հիվանդների հաշիվներում ծանուցագրերի ակնհայտ հրապարակում,
- Շտապօգնության բաժանմունքներում, շտապօգնության կենտրոններում, ընդունման/գրանցման բաժանմունքներում, բիզնես գրասենյակներում և այլ հասարակական վայրերում փակցված ծանուցագրեր, ինչպես կարող է ընտրել հիվանդանոցային հաստատությունը, և
- Սույն Քաղաքականության ամփոփագրի հրապարակումը հիվանդանոցային հաստատության կայքէջում, ինչպես նախատեսված է Հավելված Ա-ում, և հիվանդանոցային հաստատության կողմից սպասարկվող համայնքների այլ վայրերում, ինչպես այն կարող է ընտրել:

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

Հիվանդները հիվանդանոցային հաստատության ֆինանսական խորհրդատուից կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ հիվանդանոցային հաստատության AGB-ի տոկոսի և AGB-ի տոկոսների հաշվարկման վերաբերյալ, ինչպես նշված է Հավելված Ա-ում:

Նման ծանուցագրերը և ամփոփ տեղեկատվությունը պետք է ներառեն կոնտակտային համարը և պետք է տրամադրվեն անգլերեն, իսպաներեն և այլ հիմնական լեզուներով, որոնցով խոսում է այն բնակչությունը, որը սպասարկվում է առանձին հիվանդանոցային հաստատության կողմից, ըստ անհրաժեշտության:

Հիվանդների՝ ֆինանսական աջակցության ուղղորդումը կարող է կատարվել CommonSpirit հիվանդանոցային կազմակերպության ոչ բժշկական կամ բժշկական անձնակազմի ցանկացած անդամի կողմից, այդ թվում՝ բժիշկներ, բուժքույրեր, ֆինանսական խորհրդատուներ, սոցիալական աշխատողներ, գործը վարողներ, հոգևորականներ և կրոնական հովանավորներ: Աջակցության խնդրանքը կարող է կատարվել հիվանդի կամ նրա ընտանիքի անդամի, նրա մտերիմ ընկերոջ կամ համախոհի կողմից՝ համաձայն գաղտնիության մասին գործող օրենքների:

CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունները ֆինանսական խորհրդատվություն կտրամադրեն հիվանդներին EMCare-ին առնչվող հաշիվների վերաբերյալ և հասանելի կդարձնեն այդպիսի խորհրդատվության առկայությունը: Հիվանդի կամ հիվանդի երաշխավորի պարտականությունն է ֆինանսական խորհրդատուի հետ ֆինանսական աջակցության առկայության վերաբերյալ խորհրդատվություններ պլանավորելը:

Մատակարարների ցուցակը կհրապարակվի CommonSpirit-ի յուրաքանչյուր հիվանդանոցային հաստատության կողմից իր կայքէջում՝ 2021 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից առաջ, և դրանից հետո պարբերաբար այն (բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ) կթարմացվի ղեկավարության կողմից:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Այն գործողությունները, որոնք կարող է ձեռնարկել CommonSpirit հիվանդանոցային կազմակերպությունը յուրաքանչյուր հիվանդանոցային հաստատության համար չվճարելու դեպքում, նկարագրված են առանձին քաղաքականության մեջ՝ CommonSpirit-ի կառավարման քաղաքականության Finance G-004-ում՝ *Հաշիվների ներկայացում և հավաքագրում*: Հասարակության անդամները կարող են ստանալ սույն Քաղաքականության անվճար պատճենը՝ կապվելով հիվանդանոցային հաստատության հիվանդների մուտքի/ընդունարանի բաժնի հետ, ինչպես նախատեսված է Հավելված Ա-ում:

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

CommonSpirit-ի եկամուտների ստացման շրջափուլի մասով ղեկավարությունը պատասխանատու է սույն Քաղաքականության իրականացման համար:

ԿԻՑ ՖԱՅԼԵՐ

Ֆինանսական աջակցության դիմում (FAA)

ՀՂՈՒՄՆԵՐ

CommonSpirit-ի Կառավարման քաղաքականության Finance G-004՝ *Հաշիվների ներկայացում և հավաքագրում*

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

CommonSpirit-ի Կառավարման հավելվածի	Finance G-003A-1՝ *Ֆինանսական աջակցություն* –California
CommonSpirit-ի Կառավարման հավելվածի	Finance G-003A-2՝ -ի Ֆինանսական աջակցություն – Oregon
CommonSpirit-ի Կառավարման հավելվածի	Finance G-003A-3՝ Ֆինանսական աջակցություն - *Washington*
CommonSpirit-ի կառավարման հավելվածի	Finance G-003A-A՝ հիվանդանոցային հաստատության *ֆինանսական աջակցության կոնտակտային տեղեկատվության հավելվածի ձևանմուշ*

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է COMMONSPIRIT HEALTH-Ի ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ. 23 ՀՈՒՆԻՍԻ 2022 Թ.

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար:

California-ի հիվանդանոցի արդար վճարման հաշիվների ներկայացման ծրագիր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.
Եթե ձեր լեզվի հետ կապված օգնության կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել այն (661) 541-0026 կամ այցելել Bakersfield Memorial Hospital: Գրասենյակը բաց է՝ 8am-4:30pm և գտնվում է Bakersfield Memorial Hospital, 420 34th St., Bakersfield, CA 93301 : Հասանելի են նաև օժանդակ միջոցներ և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպիսիք են Բրայլի լեզվով փաստաթղթերը, խոշոր տառատեսակը, աուդիո և այլ մատչելի էլեկտրոնային ձևաչափերը: Այս ծառայություններն անվճար են:

Օգնեք վճարել ձեր հաշիվը

Կան սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող անվճար կազմակերպություններ, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ վճարման հաշիվների ներկայացման և վճարման գործընթացը: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Health Consumer Alliance-ին 888-804-3536 հեռախոսահամարով կամ այցելել healthconsumer.org կայքէջը:

Հիվանդանոցի վճարման հաշիվների բողոքարկման ծրագիր

Հիվանդանոցի վճարման հաշիվների բողոքարկման ծրագիրը պետական ծրագիր է, որը վերանայում է հիվանդանոցի որոշումները այն մասին, թե արդյոք իրավասու եք օգնություն ստանալ հիվանդանոցի հաշիվը վճարելու համար: Եթե կարծում եք, որ ֆինանսական օգնությունը սխալմամբ են մերժել, կարող եք բողոք ներկայացնել Հիվանդանոցի վճարման հաշիվների բողոքարկման ծրագրին: Լրացուցիչ տեղեկությունների և բողոք ներկայացնելու համար այցելեք HospitalBillComplaintProgram.hcai.ca.gov կայքէջը:

© Հեղինակային իրավունք 2021-2022 թթ. CommonSpirit Health: Միայն ներքին օգտագործման համար: